

217-4
7-13

ԳՐԱՑՈՒՑԱԿԻՍ ՅԱՌԱՋԱԲԱՆԸ

3717

ՄԱՅՈՒՑԱԿ

ԿԱՆ ԳՐԻԵՐՈՒ

Պ. ՊԱԼԵՆՑ ԳՐԱՏԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՉԱՔՄԱՔՃԸԼԱՐ, ԹԻԻ 20



ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Յ. ՄԱՏԹԻՆՅԱՆ

Կ. ՊՈԼԻՍ

17-13

CATALOGUE

DE LA

LIBRAIRIE B. BALENTZ

20, RUE TCHAKMAKDJILAR

CONSTANTINOPLE



IMPRIMERIE


H. MATTEOSIAN

CONSTANTINOPLE

2001

2010

ԵՐԿՈՒ ՏՈՂ



ՊԱՒԵՆՅ ԳՐԱՏՈՒՆՆ իր սեփական դասագրքերու այս ցուցակը հրատարակելուն առօրի անկեղծ գոհունակութիւն մը կը զգայ յայտարարելով թէ օգտակար դասագրքերու շարքը ինք մանաւանդ նուիրացուցած է, յատկապէս պատրաստել չալով զանոնք, ամեն տեսակէսներով գնահատելի :

Այդ նոր դասագրքերու ունեցած առաւելութիւններուն յայտնի ապացոյց է այն ջերմ ընդունելութիւնը, զոր կ'ընեն անոնց թէ՛ հայ եւ թէ օտար վարժարաններ եւ կ'արժանացնեն զանոնք նորանոր տպագրութեանց :

ՊԱՒԵՆՅ ԳՐԱՏՈՒՆՆ իրեն նպատակ ընտրած է, ինչպէս առաջ նոյնպէս ասկէ վերջը, մեր կրթական ծրագրին եւ Եւրոպական մանկավարժութեան համաձայն գործեր հրատարակել եւ այս մասին ամեն զոհողութիւններէ չընկրկիլ : Այս գաղափարին իրականացման համար մեծ գրամագլուխ մը յատկացուցած է արդէն, եւ ամենէն ճշունհաս հեղինակներ պայմանագրուած են գրաստան հետ լուստոյն երկեր պատրաստելու :

Աւելորդ չէ յիշել նաեւ թէ կազմի եւ տպագրութեան նկատմամբ կատարեալ հոգածութիւն մը նուիր-



78935-ակ
1481-87

4.

րած է այս համբաւաւոր Գրասուն՝ իր դասագրքե-
րուն , որոնց ներքին արժեքին այնքան լաւ կը հա-
մեմատի : Անոնց հաստատուն կազմն եւ լաւ սպա-
գրութիւնը՝ ՄԱՏԹԷՈՍԵԱՆ են :

Ուրեմն իրաւացի է յուսալ որ ամենեւն աւելի
փնտրուած այս դասագրքեր յառաջիկային մեջ շատ
համակիր ընդունելութիւն մը պիտի գտնեն եւ ՊԱ-
ԼԵՆՅ ԳՐԱՏՈՒՆՆ իր գտած հաշվերութեամբ զօ-
րացած պիտի կրնայ օգտակար հանդիսանալ Պաս-
ուարժան տեսուչներու , ուսուցիչներու եւ ամեն
դպրոցական վարիչներու , անոնց տրամադրութեան
տակ դնելով իր լաւագոյն դասագրքերը :

Ահա նշդիւ միակ կեդրոնական հայ գրավանա-
ռանոցն որ ԴՊՐՈՅՆԵՐՈՒ ԲԱՐԵԿԱՄ անունին ար-
ժանի է ամեն կերպով , իր յիսուն տարուան գոյու-
թեամբ , իր ընդարձակ յարաբերութիւններով , իր
գործառնութեանց բացառիկ պայմաններով , եւլն.:



Պ Ա Յ Մ Ա Ն Ն Ե Ր

1. Յանձնարարութիւնը կանխիկ վճարմամբ կը կատարուին: Բացառութիւն կը լինի գրատանտ ծանօթ կամ երաշխաւորեալ անձանց համար :
2. Գրքոյ արժէքները կը վճարուին Օսմ. սոկին 108 , արծաթ մէճիւրը 20 , Գաղղիական սոկին 95 , Անգղ. սթէրլինը 120 , ուսուցի թղթա-
գրամը 12 եւ Ամերիկեան տոլարը (թուղթ) 23 զրուշի հաշուով :
3. Դրամի փոխարէն կ'ընդունուի Օսմանեան եւ Աւստրիական նամակագրոջմ , 100 հատ զրուշ-
նոց փուլը 100 զրուշի հաշուով :
4. Մեծաքանակ գեղչ կը արուի , առանց երբորդի միջոցաւ , ուղղակի գրատանտ եղած յանձ-
նարարութեանց վրայ :
5. Գրատանտ նոր հրատարակութիւններէն մէկ մէկ օրինակ , իբր նմոյշ , սկիաի զրկուի միշտ վարժարանաց Պատ. անօրէններու եւ ուսուց-
չաց , հետեւաբար կը խնդրուի սոյն գրացանկը ընթերցող անձերէ որ բարեհաճին զխոցնել մեզ թէ քանի՞ վարժարան կայ իրենց քաղաքին եւ շրջակայիցը մէջ , եւ թէ ո՞րք են անոնց անօրէնք եւ ուսուցիչք :

6. Յանձնարարութիւնք կը կատարուին փութով եւ ինամօք : Գաւառներէ եղած յանձնարարութեանց փոխադրութեան ծախքը յանձնարարողաց կը պատկանի :

Գրասանս հասցին է .

Պ. ՊԱԼԵՆՑ

4. ՊՈԼԻՍ, ՉԱՔՄԱՔՃԸԼԱՐ ԵՕԳՈՒՇՈՒ, ԹԻՒ 20

درعليه ده چقما جيلر يوقوشنده كتبخانه بغوص بالنس

Adresse :

B. BALENTZ

LIBRAIRE - ÉDITEUR

20, Rue Tchakmakdjilar

CONSTANTINOPLE

ԳՐԱՏՈՒՆ

Պ. ՊԱԼԵՆՑ

4. ՊՈԼԻՍ, ՉԱՔՄԱՔՃԸԼԱՐ, ԹԻՒ 20



ԱՅՐԵՆՆԱՐԱՆ ՅՐԱՆՍԵՐԷՆ ԼԵՋՈՒԻ, հեղինակ Գ. Թէր-Ջեմն, տպ. 1900, էջ 70, Գ. Տիպ: Ֆրանսերէն այբուբէնը դիւրաւ սորվեցնելու կը ծառայէ այս դասատետր, որ իր վերջին տպագրութեան մէջ ստացած է հիմնական փոփոխութիւններ, թէրզեան այբբենարանս նախաբայլ մըն է նաև ֆրանսերէնէ հայ թարգմանութեան: Գին 1½ ղրշ:

ԱՅԻՆԷԻ ՄԻՒՆՇԱՍԹ, մուխրասար, էսէրի Պ. Պ. ԳԱԼԸՊՉՃԵՄՆ, սահիֆէ 63: Ֆիյ 2

ԱՅԻՆԷԻ ՄԻՒՆՇԱՍԹ, ուսուլը մուխտապամա վէ անբեամը քավանին ու նիզամամա էն մուվաֆըզ սուրէթատէ Թանգիմ օլունմուշ մուհարրերամը րէսմիյէ վէ ղայրը րէսմիյէ սուրէթլէրի. էսէրի Պ. Պ. ԳԱԼԸՊՉՃԵՄՆ. սահիֆէ 393: Ֆիյ 10

ԱՇԵԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ (նորագոյն ընծացք). Տարրական ընծացքի Ա. Տարիին (Մանկապարտէզէ վերջը) 7—8 տարեկան մանուկներու համար. յորինեց ԵՆՈՎՔ ԹէյՅԵՄՆ:

Մեր կրթական ծրագրին համեմատ ու Եւրոպական նորագոյն գործերու հետեւողութեամբ պատրաստուած այս դասագիրք կը պարունակէ դասարանի, դպրոցի, եկեղեցիի յատակագիծեր, օրինակ առնելով Կ. Պոլսոյ մէջ Բերաի Էստեան վարժարանը ու անոր կից Ս. Յարութիւն եկեղեցին: Տեղագրական մասին մէջ Թաղի, արուարձանի, զիւղի, քաղաքի յատակագիծեր, օրինակ առնելով Պոլիսն իր Թաղերովը, շրջակայ արուարձաններովն ու զիւղերովը. յետոյ իշխանաց կղզիները ու Մարմարան, Եւրոպական ու Ասիական Թուրքիա, յետոյ ընդհանուր աշխարհագրութիւն հինգ ցամաքներու:

իր տեսակին մէջ միակ այս գործ, պարզ և յստակ ոճովն, այն-
քան պէտք չժողոր աշխարհագրական ամբլաններու օժանդակու-
թեան, իր մէջ ունենալով բոլոր պէտք եղած յատակագիծներն ու
աշխարհացոյցները: Գին 3

ԱՆՇԱՐԱԶԱԳՐՈՒԹԻՒՆ, Ա. Տարի, Յ. ՊԷՅԱԶԵԱՆ, տպ. 1889,
էջ 112: Դասագիրք իր ճշգրիտ և ամփոփ տեղեկութիւններով և
Նամանը չտեսնուած աման գնովը անմրցելի: Գին 1

— Նոյնին Բ. Տարին, տպ. 1888, էջ 208: Գին 1 1/2

ԱՌՏՆՆ ԵՆՏԵՍՈՒԹԻՒՆ, Ա. Տարի, ՅՈՒՍԻԿ Վ. ԷՍՄԷՐ-
ԵԱՆ, տպ. 1896, էջ 148: — Առանին անտեսութեան տարրական
դասեր աւանդող լրագրոյն դասագիրքն է այս իր ամփոփ ոճով և
դիւրանամակալի բացատրութիւններով: Գին 3 1/2

ԱՍՏԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՍՎՋՅՈՒՆ, ՀԵՐՈՆԻՄՈՍ ԲԱՄՍԵՂ-
ԵԱՆՅ, պատկերագրող, տպ. 1880, էջ 400: — Ատտեղագիտական
ակզբունքներով և ծանօթութիւններով լի այս գիրք՝ մեր մէջ հրա-
տարակուած գիտական սակաւածիւր զրբերէն մէկն է: Գին 12 1/2

ԱՐՋԱԳԱՆԳ ԲԱՐՁԻ (Echo de Paris), Թարգմ. Ա. Մ.
ԴԱՐՄԻԱՇԵԱՆ, Կ. Պոլիս, տպ. 1890, էջ 383: Գաղղիերէն խօսակ-
ցութեան վարժեցնող հանրամատն գիրք մը, որուն բնագիրը Եւ-
րոպայի մէջ մեծ ընդունելութիւն գտած է. կը պարունակէ հասա-
րակ կեանքի խօսակցութիւններ, ոճեր, սուածներ, օգտակար ԹԷ
զպրոցաց և Թէ առանձին ուսանողաց: Գին 10

- » **ԱՆՏԱՐԱՆ**, պարզ Թղթով, էջ 260 Գին 3
- » մարուր Թղթով և հաստատուն կազմով, էջ 360 Գին 6
- » փառակազմ ոսկեզօծ Գին 20
- » և Գործք Առաքելոց, միասին կազմուած Գին 15
- » և Գործք Առաքելոց, փառակազմ ոսկեզօծ Գին 40

ԲԱՆՈՒՆ ԱՆԳՂԻԵՐԷ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ, Յ. Թ. ՀԻՆԴ-
ԼԵԱՆ, տպ. 1886, էջ 103: Նոր և դիւրուսոց եղանակ Անգղիերէն
լեզուն նախնական դժուարութիւնները հարթող: Գին 3

ԲԱՆՈՒՆ ԹՈՒՐԱՆՈՒԹԵԱՆ կամ լուծուն ինդրոց և պա-

տասխանիք. ուսուցչաց և ինքնընտել ուսանողաց անհրաժեշտ.
ՏԻԻԲԱՆ Յ. ՊՕՁԱՃԵԱՆ. Գ. Տիպ. 1894: Գին 12

ԲԱՌԱԳԻՏՈՒԹԻՒՆ ՀԱՅԵՐԷՆ ԲԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ, ԵՂԻՇԷ
ԵՊԻՍԿՈՊՈՍ ԴՈՒՐԵԱՆ. Բ. Տիպ. բարեփոխեալ և սրբագրեալ.
տպ. 1895, էջ 147: Սոյն դասագիրք իր պարունակած գրարարէ
աշխարհարար Թարգմանութիւններով կը դիւրացնէ գրաբար Ուր
Մասունք Բանիի ուսումը: Գին 3

ԲԱՌԱԳՐԻՔ (ԱՌՋԵՈՆ) ՀԱՅԵՐԷՆ-ԳԱՂՂԻԵՐԷՆ, ԿՈՄԻ-
ՏԱՍ. Ա. ՈՍԿԵԱՆ, նոր (երկրորդ) տիպ, ուղղեալ և յաւելեալ, ա-
ւելի բան 50,000 բառ, ոճ, կայլն. ընտիր Թղթի վրայ մարուր և
ճաշակաւոր տպագրութեամբ և զօրաւոր կազմով:

Այս ձոխ բառագիրք իր նոր տպագրութեան առժիւր ընդգրկած
է շատ առաւելութիւններ. յաշտած է ճշդել հայ բառերու դէմ ա-
նոնց ֆրանսերէն համանշանակները իրենց ոճերով և ստուծիւններով
հանդերձ: Գործոյն վերջ աւելցուած է Գաղղիերէն լեզուի անկանոն
և պակասաւոր բայերու պարզ ժամանակաց մէկ ցանկը ծանօթու-
թիւններով միասին:

- Ընտիր բառածնէ կազմեալ Գին 25
- Անգղիական լաժակազմ » 27
- Կիսակաշի » 32

ԲԱՌԱԳՐԻՔ ՀԱՅԵՐԷՆ ԼԵՋՈՒՆ (ՆՈՐ), ՍԻՄՈՆ ԳԱՐԱՄԱ-
ՃԵԱՆ. տպ. 1892, էջ 672: Բառագիրքս իր միշակ դիրքին հակա-
ռակ կրցած է պարունակել 30,000 բառ, ոճ, ստուծիւն, նորարա-
նութիւն, գաւառական բառ, դիցարանական անուն և իր այս հա-
մեմատարար ձոխ պարունակութիւնով իրաւունք ստացած է բոլոր
զպրոցներու և ամէն անհատի կողմէ շեղմ ընդունելութեան: Մէն մի
օրինակ ընտիր լաժակազմ Գին 15

ԲԱՌԱԳՐԻՔ ԹՈՒՐԲԵՐԷՆԷ ՀԱՅԵՐԷՆ (ԴՈՐՃՆԱԿԱՆ), Պ.
Պ. ԳԱԼԴՊՃԵԱՆ. տպ. 1890, էջ 383: Չեղնմաս հեղինակի մը գործն
է, շատ անհրաժեշտ տածիւրէն լեզուն ուսանելու: Կը պարունակէ
գիտական, բանասիրական, արհեստական ամէն գործածական բա-
ռեր, ոճեր, ստուծիւններ, կայլն: Գին շատ դիւրամատչելի 6

ԲԱՐԵԿԻՐԹ ԱՂՋԻԿ, Ընթերցարան աղջկանց վարժարաննե-
րու համար (պատկերազարդ,) ՍԻՄՈՆ ԳԱՐԱՄԱՃԵԱՆ, տպ. 1900,
էջ 208. — Նամակ Ռ. Յ. ՊԷՐՊԷՐԵԱՆԷԷ:

Սոյն գործը՝ որ Եւրոպական շատ հռչակուած հեղինակութիւն մըն է, այժմ Թարգմանուած աշխարհիկ սանուն լեզուով՝ կուգայ իբր ընթերցարան մեծ պակաս մը լեզներէ մեր աղջկանց վարժարաններուն մէջ: Կը խօսի բարեկրթութեան ու առողջապահութեան վրայ, ոչ թէ տեսականօրէն լոկ կանոններու չորուցամար աւանդուածով մը գոհանալով, այլ իր աւանդած կանոններուն, տեսութիւններուն յարմար պատմութիւններով գործական հանգամանք մը ունի իր ամբողջութեանը մէջ: Դասագիրքս՝ որ իբր աղջկանց ընթերցարան առաջին անգամ լոյս կը տեսնէ, նախորած է յիշատակին ողբացեալ Տիկին ԶԱՐՈՒՀԻ Ռ. ՊԷՐՊԷՐԵԱՆԻ՝ որուն կենդանագիրն եւս դրուած է գրքին սկիզբը:

Գին պարզ կազմին 5
 Ընտիր Թղթով Անգղիական լամպիագմ 7 1/2
 Ընտիր Թղթով լամպիագմ ոսկեգոծ 10

ԻՆՈՐՈՅԱԳԻՏՈՒԹԻՒՆ (Գործնական). Հեղինակ ՇԱՐԼ ՏԻԻԲԻԻ. Թարգմանեց ԵՐՈՒԱՆԻ. տպ. 1894, էջ 28: Տետրակ հակառակ իր փոքր ծաւալին բաւական ճաշակ մը կուտայ բարդականի գիտելիքներու վրայ: Գին 2

ԻՆՈՐՈՅԱԳՆԵՆ ԵՒ ԲՆՈՊԱՍՏԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԵԱՆՑ (ՆԱՆԱՏԱՐԵՔ). Նախակրթարանի երեք դասընթացներուն վրայ յորինուած ու բացատրող պատկերներով զիւրըմբռնելի եղած դասագիրք մըն է, որ իր նիւթերու ընտրութեամբ ու դասաւորութեամբ եւ բացատրութեանց պարզութեամբ կը համապատասխանէ Ուսումն. Խորհրդոյ կրթական ծրագրին: Յօրինած է ԵՆՈՎԷՐ ԹԷՅՅԵԱՆ, հետեւողութեամբ ՓՈՒՊԷՌԻ, ԿԱՍՍՈՆ ՊՈՆՏԻՅԷԻ, ԿԻՐԻՓՈՆԻ և այլոց:

ՏԱՐԲԱԿԱՆ ԸՆԹԱՑՔԻ Բ. ՏԱՐԻ (Ա. տարիին համար կը յանձնարարուի Թիէյեան Համալսոց Իրագիտութիւն), երկու մասի վրայ:

Ա. Մաս. Մարդ և Առողջապահութիւնը. Կենդանիք. Բոյսի կազմութիւն և օգտակար բոյսեր. Երկրագործական առաջին ծանօթութիւնը. Հանքայիններ. Ճարտարագործութիւն գործածական առարկայից:

Բ. Մաս. Բնագիտական, Տարրագիտական, Տիեզերագրական պարզ ծանօթութիւնը: Երկու մասերը միասին մէկ հատորի մէջ: Տպ. 1895, էջ 163: Գին 5

ՄԻՋԻՆ ԸՆԹԱՑՔԻ Ա. ՏԱՐԻ. Ա. Մաս. (Բնագիտական

գիտութիւնը և կիրառութիւնը). Մարդկային կազմախօսութիւն և Բնախօսութիւն. Առողջապահական մի բանի գիտելիք. Դասակարգութիւն և համառօտ պատմութիւնը կենդանեաց. Կազմախօսութիւն բուսոց. Դասակարգութիւն բուսոց. Դիւանոր ընտանիքները և Օգտակար բոյսեր. Երկրագործութիւն. Անասնաբուծութիւն. Պարտիզպանութեան վրայ կարծ ծանօթութիւններ. Հանքայինք և Երկրի կազմակերպութեան վրայ համառօտ ծանօթութիւնը. Ճարտարագործութիւնը գործածական առարկայից: Տպ. 1897, էջ 187: Գին 6

ՄԻՋԻՆ ԸՆԹԱՑՔԻ Բ. ՏԱՐԻ. Բ. Մաս. (Բնագիտական գիտութիւնը). տպ. 1900, էջ 144:

Կը պարունակէ Բնագիտութեան (Physique) ու Տարրագիտութեան (Chimie) գանազան ձեւերէն գաւ Տիեզերագրութեան (Cosmographie) ամփոփ ընթաց մը 9—10 տարեկան տղոց ըմբռնումին յարմարուած: Գործին բացատրութիւնը կը զիւրացնեն բազմաթիւ նոր ու գեղեցիկ պատկերներ: Երեք զիրք մէկ հատորի մէջ: Գին 5

ՊԵՂՆԵՅԻ ԶԲՍՈՒՐԱՆ կամ Վարժութիւն հայ խօսակցութեան և ընթերցման, ի պէտս տանկախօս տղայոց. Հեղինակ Վ. Յ. ՄԱՐԿԱՐԵԱՆ. Ա. տարի. տպ. 1895, էջ 96: Հայ լեզուի ուսումը կը զիւրացնէ Թրքախօս մանուկին համար շնորհիւ իր ճարտար և մանկավարժական յօրինուածին: Գին 2 1/2

— Նոյնին, Բ. տարի, տպ. 1896, էջ 112: Գին 3

ՊԻՍՏԱՐՈՒՔ. ՀԵՐՈՆԻՄՈՍ ԲԱՐՍԵՂԵԱՆ. տպ. 1885, էջ 121: Աստղագիտական ձեւերով լի մատենիկ մը, որ գիտաորներու վրայ կատարեալ տեղեկութիւններ կուտայ: Գին 5

ՊՈՐՈՒԹԻՒՆ կամ Զրուցատրական նոր մեծոտ ուսման Ֆրանսերէն լեզուի, ի պէտս վարժարանաց և ինքնընտել ուսանողաց. Հեղինակ ԷՄԻՆ ՕԳՒՌՅԱՆ: Գերմանական բնագրէն փոխադրեց ի Հայ ԵԶՆԻԿ ՏԷՐ ՅՈՒՀԱՆՆԷՍԵԱՆ: Օղղոյի մեծոտը հռչակուոր է լեզուի ուսումը զիւրացնելու մասին: Քիչ միջոցի մէջ ֆրանսերէն խօսակցութեան կը վարժեցնէ աշակերտը:

Տպ. 1894, Գ. Տպ. Ա. Մասն, էջ 304 (40 դաս) Գին 7

Բ. Մասն, էջ 416 (26 դաս) » 8

Ա. և Բ. Մասերն միասին կիտակաշի կազմուած » 16

Սոյն երկու մասերուն բանալին » 4

ԸՆԹԱՅՔ Ի ԳՐՈՑ ԲԱՐՏԱԹ. Ա. Տարի. ԵՂԻՇԷ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԴՈՒՐԵԱՆ. Ե. Տիպ. տպ. 1900, էջ 144: Գրաբարէ աշխարհարար Թարգմանութեանց համար առաջին դասագիրքը, արձակ և ոտանաւոր, նախնեաց և արդեաց գործերէն ընտրուած հատուածներ, բերական կանոններով և բառից նշանակում իւրներով: Գին 5

— **ՆՈՅՆ, Բ. Տարի. Առաջնոյն ծրագրին համեմատ յօրինուած, ին և նոր գրաբար գրուածքներու ընտիր ծաղկաբաղ մը, պարզաբանուած բերականական կանոններով և բացատրեալ բառերով: Բ. Տիպ. 1896, էջ 174:** Գին 7 1/2

Ը. ԹԱՅՔ ՀԱՐԱԳՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՎՅՅԵԼԱԿՍՈՒԹԵԱՆ. Մեծոռ Դառէ և Մաս. Ա. Տարի: Աշխատասիրեալ ՆՇԱՆ Ֆ. ԹՈՐՈՍԵԱՆԷ. տպ. 1899, էջ 120: Երրպական հանրամատն զասագրքի մը հետեղուածամբ պատրաստուած այս գործ կը դիւրացնէ վայելչախօսութեան և լաւ գրելու ուսումը, վաւերացեալ և արտօնեալ յուսումն. Խորհրդոյ Ազգ. Կեդր. Վարչութեան: Գին 4

— Նոյնին Բանալին » 4

ԸՆԹԵՑԱԲԱՆ (Նոր), հետեղուրեանք Նեեչի Բ. շնորհարակին. Մասն Ա. — Պարունակութիւնն է՝

1. Մակեական հանրագիտակ.
2. Ընթերցում և գիր.
3. Իրագիտութիւն, բազմաթիւ պատկերներով,

ՍԻՄՈՆ ԳԱՅԱՄԱՐԱՆՆԵԱՆ. Տպ. 1900, էջ 80:—Այս նոր ԸՆԹԵՐՅԱՐԱՆԷ՝ Երրպական մանկավարժութեան առջև ամենէն աւելի յարգ գտած գործ մ'է՝ որ սանուն աշխարհարարի վերածուած կուզայ առաջին տեղը զբաւել մեր բոլոր ընթերցարաններուն մէջ: Իր էջերը կը զբաւեն կարծ և սիրուն հրահանգիչ հատուածներ, մանկական վիպակներ, ոտանաւորներ, որոնց ամենքն ալ մանուկին օգուտ և հանօր միանգամայն կ'ընծայեն: Կը տրվցնէ ընթերցման հետ նաև զբավարժութիւն, զրի օրինակներ տալով ամէն էջի տակ: Պատկերներու միջոցաւ կ'աւանդէ տարրական իրագիտութեան դասեր, աշխատհարգութեան, քուսակներու, փրակներու առաջին ծանօթութիւններ, և այլն: Անշուշտ նոր մեծոտներու հետամուտ եղող մեր ուսուցիչներ այս պիտի նախընտրեն ամէն ընթերցարաններէ աւելի: Գին 2 1/2

— Բ. Մասն մամուլ տակ է:

ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԸՆԴԱՐՁԱԿ, սեական եւ գործնական, կարեւոր յաւելումներով ճորտացած. ՏԻԳՐԱՆ ՊՕԶԱՃԵԱՆ. վաւերացեալ յուսումն. Խորհրդոյ Ազգ. Կեդր. Վարչութեան. տպ. 1893, էջ 526, Թ. Տիպ. — Այս դասագիրք պէտք չունի նորանոր վայելուն գնահատուածներու. երկար տարիներէ ի վեր ծանօթ է այն մեր բոլոր դպրոցներուն, հետզհետէ ստացած իր առաւելութիւններով, ինչպէս այս վերջին տպագրութեան մէջ երկրաչափական ծանօթութիւններու մասն աւելցած է: Գին 15

ԹՈՒԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԴԱՍԸՆԹԱՅՔ, մշաւոր եւ գրաւոր, պատրաստուած Ազգ. Կեդր. Վարչութեան Ուսումն. Խորհրդոյ վերջին կրթական ծրագրին համաձայն և ըստ այնմ երեք տարիներու բաժնուած:

Գործոյ հեղինակն է ԳԱՐԵԻՒՆ ԳԱՎԱՅԻԱՆ, հմուտ ուսուցիչ մանկամիքայի՝ որ իր այս գործեր օժտած է երրպական նորութիւններով և իր անձնական փորձառութեամբ:

ՏԱՐԱԿԱՆ ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ, Ա. և Բ. Տարի. 1էն մինչև 1000 ամբողջական թուոց, 0,1—0,001 տասնորդական կոտորակաց մշակութիւն, տարրական մէթրական դրութիւն, հասարակ կոտորակաց վրայ նախնական ծանօթութիւնը, տարրական երկրաչափութիւն: Գ. Տիպ. 1900, էջ 162 Գին 4 1/2

ՄԵԶԻՆ ԸՆԹԱՅՔ ԹՈՒԱԲԱՆՈՒԹԵԱՆ, (Միջին դասընթացը) Գ. և Գ. Տարի: Ամբողջական թուոց մշակութիւն, Տասնորդական կոտորակներ, Հասարակ կոտորակաց վրայ ծանօթութիւններ, Մէթրական չափեր, Միութեան կանոնի կիրառութիւնը Երկր կանոնի, Տոկոսի, Զեղչի, Խնայողութեան սնուկի, Ապահովագրութեան վերաբերեալ խնդրոց մէջ, Հաշուեցոյցներ. Երկրաչափութիւն. Կէտ, Գիծ, Երկրաչափական ձեւեր, Կանոնաւոր ձեւերու մակերեւութները գտնել, Շրջանակ, Բոլորակ և անոնց մասերը, զլիսաւոր մասեր և անոնց կազմութիւնը խաւարարտով, Բազմաթիւ խնդիրներ գործնական կեանքէ աւանուած. Բ. տպագր. քննուած և յաւելուած: Տպ. 1898, էջ 263: Գին 6

ԲԱՐՁՐԱԳՈՑ ԴԱՍԸՆԹԱՅՔ. Ե. և Զ. Տարի. — Ամբողջ թուոց մշակութիւն, Տասնորդական և Հասարակ կոտորակներ, Մէթրական չափեր, Կարողութիւն և արմատ—Գաւաթուտի և խորանարդ, Համեմատութիւն և անոր գործածութիւնները: Տոմարակալութիւն, Հաշուեցոյցներ, Տոմարակներ, Պարզ սօմար, Երկրաչափութիւն, Մա-

1897, էջ 80:—Սոյն դատագիրք բանեւորս դասերու մէջ կ'աւանդէ կարծ իրանագրեատին, գրոշակուար իրանագրեատին և շրջագրեատին ձեւն ու յօրինումը:

Գործը պատրաստուած ըլլալով յատկապէս նախակրթարանի աղջկանց համար, կը դիւրացնէ անոնց՝ ձեւելու արնետը, որ երբեմն մենաշնորհ կը նկատուէր մեծ աղջիկներու: Գին 5

ՄԱՐԴԱԿԱԶՄՈՒԹԵԱՆ ՏՈՒՐԵՔ. Աշխատասիրութեամբ երկուց հարազատաց ՅՈՎՍԵՓԱՅ ԵՒ ԱՆՏՈՆԻ ՅԱԿՈՐԵԱՆ. Տպ. 1890, էջ 104:— Դատագիրքս ժ.Գ. զլուիններու մէջ կ'աւանդէ դիւրմբբունելի կերպով մարդակազմութիւնը: Գործը զարդարուած է 40ի չափ պատկերներով՝ որոնք կը ծառայեն նորահաս մտքերու մէջ աւելի լաւ տպուածքի այս կարեւոր ուսումը: Գին 3

ՆԱՄԱԿԱՆԻ ԱՌՁԵՌԿ. ՄԻՄՈՆ ԳԱՅՄՄԱՃԵԱՆ. Տպ. 1893, էջ 272: Այս գործ՝ որ տասներկու զլուիններով 200 նամակներու օրինակներ կը պարունակէ սահուն աշխարհաբարով մը գրուած, իբր նամակագրութեան լաւագոյն դասագիրք կրնայ ծառայել թէ՛ մեր զպրոցներուն մէջ և թէ՛ աւանձին ուսանողներու: Գին 7

ՆՈՐ ԸՆԹԱՑԳ ԳԱՂՂԻԵՐԷՆԷ Ի ԱՅՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ, հանդերձ համատուտ քերականութեամբ. Ա. Մանն (սպաւած). Բ. Մանն, էջ 75, գին 2. Գ. Մանն, էջ 63, գին 2. Դ. Մանն, էջ 188, գին 4. Ե. Մանն, էջ 210, գին 4: Աշխատասիրեալ ԿՈՄԻՏԱՍ Ա. ՈՍԿԵԱՆԷ:

ՆՈՐ ԸՆԹԱՑԳ ԳՐԱԲԱՐ ԼԵՋՈՒԻ. ԵՂԻՍՉԱՐ ՄՈՒՐԱՏԵԱՆ. Տպ. 1866, էջ 148:— Փորքիկ ծաղկաբաղ մը Ա. Իրքէն քաղուած թարգմանելի հատուածներ պարունակող: Գին 2

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՆՆԵՐ. պատկերազարդ գրեց ՄԻԻԹԱՐ ՊՈՆՏԱՅԻ:— Առաջնոյն ուղղութեամբ պատրաստուած՝ կը պարունակէ Նոր Կտակարանի պատմութիւններ՝ համաձայն Ա. Գրոց աւանդածին: Դպրոցաց վարիչ մարմիններու ջերմապէս կը յանձնարարուի այս գործն իր գեղեցիկ դասաւորութեան և հարտար յօրինուածքին համար:

Թուղթ և տպագրութիւն՝ Խիսոս գերագանց, պատկերներն յատկապէս Դերմանեա փորագրուած: Գին 4

ՈՃԳ, ՅԱՏԿԱՐԱՆՈՒԹԻՒՆԸ, ԱՌԱԿԸ ԵՒ ՄԱՍՆԱՍՈՐ ԳԻՏԵՒԻՔ Ֆրանս. լեզուի. Յ. Թ. ՀԻՆՊԻՆԱՆ. տպ. 1887, էջ 563:—

Կը պարունակէ ֆրանսերէն ոճերն ու յատկաբանութիւնները, զորս անհրաժեշտ է գիտնալ ֆրանսերէն լեզուի ուսանողներուն: Գին 7½

ՊԱՏՄՈՒԹԻՆ ԼԱՄԱՌՈՑ ՓԻԼԻՍՈՓԱՏՈՒԹԵԱՆ. Ա. Մ. ԳԱՐԱԳԱՇԵԱՆ. տպ. 1868, էջ 76: Փիլիսոփայութեան պատմութեան վրայ համատուտ բայց ամփոփ տեղեկութիւններ: Գին 3

ՏԱՂԱՋԱՓՈՒԹԵԱՆ ԱՐՈՒՅՑ ԼԱՄԱՌՈՑ հանդերձ գրաբար և աշխարհաբար հասցեւոր ֆրանսացի հաւաքածոյն. Յ. ԳՈՒՐԴԷՆ. տպ. 1897, էջ 112: Վաւերացեալ յուսումն. Խորհրդոյ Ազգ. Կեդր. Վարչութեան: Մեր մէջ զգալի պակաս մը կը լրացնէ սոյն դատագիրք իր կարեւորութեամբ և դիւրետոյց եղանակով: Աւանդուած կանոնք և ծանօթութիւնք մեծ մասամբ հեղինակին անձնական դիտողութեանց և ուսուցչական բազմամեայ փորձառութեան արդիւնք են: Գործոյն վերջին մասը կը կազմէ գրաբար և աշխարհաբար ռոտանաւորներու հաւաքածոյն: Գին 3

ՏԱՂԱՋԱՓՈՒԹԻՆ ԱՐԴԻ ԽԱՅԻՔԻՆ ՂԵՂՈՒԻ, ԽԱՆԴԵՐՁ ԾԱՆՈՐԱՐԵԱՆԻ ԵՐԿՐԱԿԱՆ ԵՒ ՂԵՂՏԽԱՂ ՌՏԱՆԱՐՈՒՆԵՐՈՒ ՎՐԱՅ. Ս. Մ. ԳՈՍԱՊԵԱՆ, ուսուցիչ հայ լեզուի Պարտիզակի բարձրագոյն վարժարանին. տպ. 1895, էջ 80: Այս գրքովս երկու մասի բաժնուած է, չափական և շեշտեալ ռոտանաւորի տեսակներուն համար: Գործոյն վերջը գրուած են այլ և այլ տեսակներ: Գին 2½

ՏԱՐԵՔ ՄԱՅՐԵՆԻ ԼԵՋՈՒԻ, երեք հատորէ բաղկացեալ ընթերցարան, մանկավարժական լաւագոյն գործերու հետեւողութեամբ, կը պարունակէ այբենարան և հեզարան, սիրուն հատուածներ, վէպիկներ, մանկական երգեր, Լայլն, Լայլն, բազմամիւ պատկերներով զարդարուած: Տպագրութիւն և կազմ ընտիր. տպ. 1900, էջ Ա. Մասին 112: Գին 3

— Նոյն, Հասոր Բ. պատկերազարդ. առաջինէն աւելի ճոխ նիւթերով. տպ. 1899, էջ 159: Գին 5

— Նոյն, Հասոր Գ. տպ. 1900, էջ 192: Գին 5

ՓԻՋԱԿ (ՆՈՐ), զրբոյկ ընթերցանութեան և արտասանութեան, մանկական սիրուն ռոտանաւորներ, արձակ մանր հատուածներ, գրուալի, գեղեցիկ: Քերականէն վերջ՝ կարգալու յարմար: Տպ. 1900, էջ 48: Գին մէկ օրինակի 4

100ը անգեղջ 60

ՓՆՋԻՎ, նախապատասխան **սարի** հայերի և արտասանութեանց, զարդարուած բազմաթիւ սիրուն պատկերներով, հետեւողութեամբ ՄՕԱՅԻ «Արտասանութեան Ա. Տարի» դասագրքին. ՍԻՄՈՆ ԳԱՐԱՄԱՃԵԱՆ. տպ. 1894, էջ 102: Կը պարունակէ բաց ի արձակ և ոտանաւոր հատուածներէ՝ նիւթոց ամփոփումներ, բարոյականներ, առածներ, բերականական նրահանգներ, Սոյն դասագիրք ոչ միայն նախնական ընթերցարան մ'է, այլ և գործնական բարոյագիտութիւն մը իր յարմար հատուածներով: Գին 3

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՐԿԻ ԱՇԽԱՐՀԱՐԱՐ ԼԵՋՈՒԻ Ա. Գիրք. Ուսումն. Խորհուրդէն վաւերացուած. ԶԱՊԷԼ Կ. ՏՕՆԷԼԵԱՆ. Տպ. 1899, էջ 144. Բ. Տիպ: Բազմաթիւ աշխարհար բերականութիւններու մէջ միակն է սա շնորհիւ իր ճարտար յօրինուածքին. կանոններուն ուսումը դիւրացած է իր պարունակած արձակ և ոտանաւոր սիրուն և օգտակար հատուածներով, որոնց ամենքն ալ ունին հրապոյր, փայլ և նորութիւն: Գին 3

ՆՈՅՆ, Բ. Գիրք, տպ. 1899, էջ 206: Միեւնոյն մեծոտով պատրաստուած, որով իրաւունք ունի մեր բոլոր զգրոյցներուն մէջ մտաւ գտնելու, ինչպէս Ա. գիրքը լաւ ընդունելութիւն գտաւ Ազգէն, ըստ որում մեր հայերէնի ուսուցիչք լաւ գնահատեցին Տիկին Տօնէլեանի ընտրած մեծոտին առաւելութիւնները, որ է գրուածքէն հանել կանոնը, նոյնպէս զքքին պարունակած նրահանգիչ հատուածները, սիրուն ոտանաւորները, շարադրութեանց վարժութիւնները, և այլն: Գին 4

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԳԱՂՂԻԵՐԻՆ, Օլէնտորֆի գրութեամբ: Փրանսերէն խօսակցութեան և բերականական կանոնաց վարժելու համար հռչակուած է արդէն Օլէնտորֆ, որ սուղ ժամանակի մէջ կը սորվեցնէ լեզուն. Ա. Մ. ԳԱՐԱՄԱՃԵԱՆԷ. տպ. 1887, էջ 584:

— Նոյնին Բանալիւն

Գին 15
» 5

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՆԳՂԻԵՐԻՆ ԼԵՋՈՒԻ ըստ ԹՈՂՄԱՍ ԿԱՍՓԷԻ. Մասն Ա. Բառագիտարիւն. Գերմաներէնէ ի նայ վերածեց Գ. Թ. Յ. Տպ. 1895, էջ 294: Գործոյ բնագիրը կարճ ժամանակի մէջ շա տպագրութիւն ունեցած է: Կը պարունակէ դիւրամբանելի կանոններ, իրենց յարմար նրահանգներով, ամենօրեայ խօսակցութեան նիւթեր, անկանոն բայերու, խօսակցու-

ծեան և գրութեան մէջ սովորական կրճատումներու կարեւոր ցանկեր, և այլն: Գին 12½

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԳՐԱՐԱՐ ԼԵՋՈՒԻ, ընտիր դասագիրք նրահանգներով. Յ. ՇԻՇՄԱՆԵԱՆ. տպ. 1873, էջ 197: Գին 3

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ (ՆՈՐ) ՀԱՅԵՐԻՆ ԳՐԱՐԱՐ ԼԵՋՈՒԻ. ՍԻՄՈՆ ԳԱՐԱՄԱՃԵԱՆ. Տպ. 1897, էջ 369: Բովանդակառիւն. Նախաշառիչ. — Մասունք Բանի. — Կանոնք. — Չարտուրութիւնք. — Ծանօթութիւնք և դիտողութիւնք. — Նախադասութիւնք. — Քերականական և տրամաբանական լուծումն. — Համաձայնութիւնք. — Քերականական ձեւք. — Կետադրութիւնք. — Արմատ, Ածանց և Բարդ բառեր. — 260 նրահանգք. — 64 զարար հատուածք: — Այս դասագիրք, արդիւնք բազմամեայ փորձառութեան հեղինակին, իր գործնական յօրինումով և բազմատեսակ առաւելութիւններով արժանի է չեմք ընդունելութեան բոլոր նայ վարժարանաց մէջ: Գին 7

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻՎ ԼԵՋՈՒԻ. Տարական ընթացք. Բ. Մ. ՊՕՋԱՃԵԱՆ. Տպ. 1894, էջ 64: Դասագիրքս գործնականը տեսականին հետ կը միացնէ, աշակերտը վարժեցնելով առաջին օրէն իր ըմբռնած կանոնները գործադրել 170 նրահանգներու մէջ: Գին 2

— Նոյն, Միշին ընթացք, էջ 200:

Գին 4

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ (ԱՇԽԱՐՀԱՐԱՐ ԳՈՐԾՆԱԿԱՆ) ԵՒ ԷԱՐԱԳՐՈՒԹԵԱՆ ԳԱՍԵՐ, մանկավարժական նոր գրութեամբ, նախակրթարաններու համար. Ա. Կ. ՊԵՏԻԿԵԱՆ. — Անգլոյ և Ամերիկայի վարժարանաց մէջ ամենէն աւելի ընդունուած բերականութիւններուն հետեւողութեամբ յօրինուած է այս դասագիրք գործնական ուղղութեամբ մը, այսինքն՝ խօսերու կամ նախադասութեանց միջոցաւ սորվեցնելով բերականական կանոններ, իր այս ուղղութեան լաւ գնահատուած ըլլալուն փայլուն ապացոյցն է այն չեմք ընդունելութիւնը՝ որուն արժանացած է այս գործ սուղ ժամանակի մէջ հազարաւոր օրինակներով սպառելով: Գործը երեք շրջաններու բաժնուած է:

Առաջին շրջանին մէջ ուսանողը պիտի ծանօթանայ սուսկ բառերուն և աւուց կատարած պաշտօններուն, առանց սորվելու մանրամասնութիւնները: Տպ. 1898, էջ 120. Բ. Տիպ: Գին 2

Երկրորդ շրջանին մէջ կ'աւանդուի Մասունի Բանկներու ստ-
րաքաժանուձը կամ Տեսակները: Տպ. 1899, Բ. Տիպ, էջ 112:

Գին 2 1/2

Երրորդ շրջանին մէջ ուսանողը կը զիանայ բառերուն կրած
փոփոխութիւնները: Տպ. 1896, էջ 238:

Գին 4

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՅՈՒՆԱՐԷՆ ԼԵՋՈՒՒ. Տ. 201ԱՔԻՏԷՄ. Տպ. 1895, էջ 271: Իր ունեցած առաւելութիւններով գնահատուած
այս դասագիրքն յունարէն լեզուն դիւրաւ սորվելու միակ գործը
կը ներկայանայ մեր մէջ:

Գին 10

ՔԵՐԱԿԱՆ ՅՈՒՆԱՐԷՆ ԼԵՋՈՒՒ. Տ. 201ԱՔԻՏԷՄ. Տպ. 1895, էջ 31:

Գին 1 1/2

**ՔԵՐԱԿԱՆ-ԸՆԹԵՐՅԱՐԱՆ. Մանկապարտէզներու և ծաղ-
կոցներու համար. ԵՆՈՎՔ ԹԷՅՅԱՆ. Տպ. 1899, էջ 32: Գին 2**

Նոր գիրերով, տոկոն թուղթի վրայ, գեղեցիկ տպագրութեամբ
ու շատ վայելուչ կազմով սիրուն զբոյի մըն է որ փոքրիկ տղուն
պիտի կրնայ սիրցնել գիրը, պատկերն ու գիրքը: Բոլորովին ման-
կավարժական ուղղութեամբ պատրաստուած այս գործ նպատակ
ունի մանուկին սորվեցնել միեւնոյն ատեն ԿԱՐԳԱՆ, ՀԱՍԿՆԱՆ և
ՈՒՂՂԱԳՐԵՆ: Այբուբէնը սկսելու համար Եւրոպական մանկավար-
ժութեան հնարած գլխաւոր մեթոտներն ու եղանակները ցուցուած
են զբոյի վերջը «Եւրագիր-Ուղեցոյց»ին մէջ և Ուսուցչին թողուած է
հետեւիլ որ և է մէկին, որուն անկատար կը յարմարի գործին ձեւը:
Նարժական տատերու գործածութիւնը ցուցուած է մանրամասն կեր-
պով: Մանկավարժական Գերակամի խնդիրը այս գործին միջո-
ցաւ յաճուած կրնայ հաստատուիլ:

**ՔԵՐԱԿԱՆ-ԸՆԹԵՐՅԱՐԱՆ. պատկերագրող. հեղինակ Մի-
թԱՐ ՊՈՆՏՍՅՅԻ. տպ. 1900, էջ 160:** Նորագոյն մեթոտներու հե-
տեւորութեամբ պատրաստուած այս Քերական-Ընթերցարան ան-
շուշտ ջերմ ընդունելութեան մը պիտի արժանանայ. ըստ որում
բնն մանկավարժականն է սա և իբր այն՝ մեր այսքան ընթերցա-
րաններէն վերջը հրատարակութեան իրաւունք ստացած է: Թուղթ
և տպագրութիւն՝ խիստ գերազանց. պատկերներն յատկապէս ի
Գերմանիա փորագրուած:

Գին 5

0029344

Գրասունս բաց ի իւր սեպիական հրա-
սարակութիւններէն զորս ունեցած է իւր
բազմաժամանակեայ գոյութիւնով. ունի
նաեւ իւր ֆով պատրաստ հանրածանօթ հե-
ղինակներու թէ դասական եւ թէ այլ զա-
նազան գործերն, ինչպէս նաեւ Վեներսիկի
եւ Վիեննայի Վերայ. Հարց հրասարակու-
թիւնները. նոյնպէս թուրքերէն, գաղղիերէն,
անգղիերէն եւ յունարէն լեզուաւ զանազան
դասագրքեր:

Գրասանս կողմէ 1900 տարուայ յատուկ
մի ընդհանուր գրացուցակ եւս պատրաս-
տուած է, որ այժմ մամլոյ տակ կը գտնուի
եւ որ ինչ ժամանակէն լոյս տեսնելով, ձրի-
ապէս պիտի դրկուի ամէն փափաֆողաց:

3717

<< Ազգային գրադարան



NL0019344

ՀԵՏԵ



Imprimerie H. MATHEOSIAN
Bible House, Constantinople